Հաստատված է

«ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

միակ մասնակցի կողմից

Լիազորված անձ՝ Տիմուր Տուրլով

02/02/2023թ.

«ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2023

(ա) «ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ «Ընկերություն») այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարում է ըստ դրանց ստացման

հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում:

(բ) Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոնները:

(գ) Սույն քաղաքականության (բ) կետում նշված գործոնների հարաբերական կարևորությունը կամ կարևորության աստիճանը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝

1. հաճախորդի պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ լինելը,

2. հաճախորդի պատվերի էական պայմանները (գնային, ծավալային և քանակական պայմանները, հաճախորդի առանձնահատուկ ցուցումները և այլն),

3. հաճախորդի պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն),

4. գործարքի կնքման վայրի (միջոցի) առանձնահատկությունները:

(դ) Պատվերները կարող են կատարվել ինչպես կարգավորվող շուկայում, այնպես էլ դրանից դուրս:

(ե) Այն դեպքում, երբ պատվերի առարկա արժեթղթերը թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, պատվերները կատարվում են կարգավորվող շուկայում: Չխախտելով նախորդ նախադասությամբ սահմանված կարգավորումները՝ պատվերները Ընկերության կողմից կարող են իրականացվել նաև չկարգավորվող շուկաներում:

(զ) Եթե պատվերի առարկա արժեթղթերը թույլատրված են առևտրին միաժամանակ մի քանի կարգավորվող շուկայի օպերատորների համար, ապա պատվերը կատարվում է այն օպերատորի միջոցով, որի առաջարկած պայմանները (գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը) ավելի լավն են, բացառությամբ այն դեպքի, երբ հաճախորդը իր առանձնահատուկ ցուցումներում նշել է այլ օպերատորի անուն:

(է) Սույն քաղաքականությամբ նկարագրված գործողությունների և/կամ գործառնությունների իրականացումը, Ընկերության և Հաճախորդի միջև հաղորդակցումը, Ընկերության կողմից Հաճախորդի պատվերների իրականացումը/կատարումը կարող է իրականացվել Ընկերության կողմից այդ

նպատակով առաջարկվող կամ սահմանված ծրագրային ապահովման և/կամ փոստային հաղորդակցության և/կամ էլեկտրոնային հաղորդակցության և/կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով: